Արձանագրություն N 3
«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սպիտակ

05.02.2019թ.
ժ. 10:00

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Համբարյան, Ն. Յարմալոյան,

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Ավետիսյան

Ընդունել ի գիտություն, որ 29.01.2019թ.-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացրած հարցման վերաբերյալ 01.02.2019թ.-ին տրամադրվել է տեղեկատվություն, որի համաձայն Ա/Ձ Գևորգ Ստեփանյանը և «Նարինե» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն, իսկ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները չեն գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքներին:

Ա/Ձ Գևորգ Ստեփանյանը և «Նարինե» ՍՊԸ-ն 29.01.2019թ.-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am համակարգի միջոցով ծանուցվել են, որ երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնեն որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված ժամկետում որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ներկայացվել են միայն «Նարինե» ՍՊԸ-ի կողմից, իսկ Ա/Ձ Գևորգ Ստեփանյանի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է «Նարինե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, արձանագրել է, որ բոլոր պահանջվող փաստաթղթերը առկա են և գնահատել է բավարար:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Նարինե» ՍՊԸ -ին ճանաչել ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի հաղթող (ընտրված) մասնակից:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն Ա/Ձ Գևորգ Ստեփանյանի հայտը մերժել:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. «Նարինե» ՍՊԸ -ին ճանաչել ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից և ծանուցել 3 աշխատանքային օրվա

ընթացքում ներկայացնել ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար հրավերով նախատեսված հիմնավորող փաստաթղթերը:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Միրզոյան

Անդամներ՝ _____ Լ. Համբարյան

_____ Ն. Յարմալոյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան